ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

N 02-03/26

18.06.2026թ.

*Լիցենզիա ՔՊԼ-001139*

**Նախագծային կազմակերպություն՝** «ԳԵՈՔԱՐՏ» ՍՊԸ

**Տնօրեն՝** Ն. Թովմասյան

# *ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*

## ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԳԱՆՁԱՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԵՆՏՐՈՆԻՑ ԴԵՊԻ Տ-10-22 ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ԵՎ Տ-10-22-ԻՑ ԴԵՊԻ ԴՊՐՈՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Երաշխավորվում է ՀՀ Տավուշի մարզի Գանձաքար բնակավայրի կենտրոնից դեպի Տ-10-22 համայնքային նշանակության ավտոճանապարհի և Տ-10-22-ից դեպի դպրոց համայնքային նշանակության ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին: Նախահաշվային արժեքը կազմում է 200761.7 հազ. ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

ՏՆՕՐԵՆ՝ Ա.ՍԱՀԱԿՅԱՆ

Նախագծման հիմք են ծառայել՝

- Նախագծման թույլտվություն

Փորձաքննության է ներկայացվել նախագիծ կազմված 2 ալբոմից

Գիրք 1- Ճարտարապետաշինարարական մաս

Գիրք 2- Նախահաշիվ

**Ճարտարապետաշինարարական մաս**

Սույն նախագծով նախատեսված է ՀՀ Տավուշի մարզի Գանձաքար բնակավայրի կենտրոնից դեպի Տ-10-22 համայնքային նշանակության ավտոճանապարհի և Տ-10-22-ից դեպի դպրոց համայնքային նշանակության ավտոճանապարհի հիմնանորոգման նախագիծը:

Նախագիծը կազմվել է ըստ Իջևանի համայնքապետարանի տրված առաջադրանքի:

Տվյալ ճանապարհահատվածը գտնվում են ՀՀ Տավուշի մարզի Իջևա համայնքում :

Վերանորոգվող ճանապարհի երկարությունը 470 գծամետր է, իրենից ներկայացնում Գանձաքար բնակավայրի Տ-10-22-ից դեպի դպրոց համայնքային նշանակության ավտոճանապարհ:

Ճանապարհի ուսումնասիրությունից պարզվեց, որ ճանապարհը գրունտային ճանապարհ է:

Ըստ առաջադրանքի անհրաժեշտ է իրականացնել հետևյալ աշխատանքները, գոյություն ունեցող պատվածքի հեռացում նոր պատվածքի տեղադրում Ինչպես նաև նախատեսված է իրականացնել մայթեր սիզամարգեր կառուցել հենապատեր ջրահեռացման համակարգ և երկաթբետոնե աստիճաններապահովել տրանսպորտային և հետիոտնային անվտանգությունը:

Նախագծային աշխատանքները կատարվել են ՀՀՇՆ 32-01-2022 «Ավտոմոբիլային ճանապարհներ», ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր», ՀՀՇՆ 52-01-«Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ», ՀՀՇՆ 40-01.03-2022 «Կոյուղի. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ» և ՀՀՇՆ 30-02-2022 «Տարածքի բարեկարգում» շինարարական նորմերով և համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի <Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքներում (այդ թվում բնակավայրերում) ոչ տարանցիկ, տեղական

նշանակության ավտոմոբիլային և ներհամայնքային ճանապարհների ու փողոցների երթևեկելի մասի և մայթերի սալարկման, խճապատման և բարեկարգման աշխատանքների կատարման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» N105-Ն հրամանի՝ AutoCad և Civil3D համակարգչային ծրագրերով:

Ըստ տեխնիկական առաջադրանքի ճանապարհի պարամետրերը ընտրվել են

- երթևեկելի մասը - շարժման շերտերի լայնությունը՝ 2x2,5 մ
- երթևեկելի մասը - շարժման շերտերի երկարությունը՝ 470 մ
- Մայթեր 1,5 մ

Հիմնվելով ակնադիտական, երկրաբանական, շրջակա միջավայրի պահպանության միջոցառումների ուսումնասիրությունների վրա, նախագծով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

Նախատեսվում է

- Կատարել հողային աշխատանքներ
- Կառուցել հենապատեր
- Վերականգնել ճանապարհային հողային պաստառը
- Կառուցել ճանապարհային հագուստը
- Կառուցել մայթեր
- Կառուցել ջրահեռացման համակարգ

Հատակագծում ճանապարհներիի ծրագիծը մաքսիմալ նմանեցված է ճանապարհի գոյություն ունեցող ծրագծին:

Լայնական կտրվածքում, երթևեկելի մասի թեքությունը 20‰ է, Մայթերինը նույնպես

Երկայնական կտրվածքում առավելագույն թեքությունը կազմում է 107.7‰, իսկ մինիմումը՝ 14‰:

Նախագծման և տեղանքի նպատակահարմարությունից ելնելով լայնական կտրվածքները տրված են 20 մետրը մեկ:

Հետախուզական աշխատանքների ժամանակ կատարվել է տախեոմետրական հանույթ 1:200 մասշտաբի:

Երկայնական կտրվածքը հիմնականում թողնվել է նույնը, որոշ հատվածներում նախատեսվում է իրականացնել պրոֆիլավորման և ջրահեռացման աշխատանքներ:

Նախատեսվում է իրականացնել հետևյալ պատվածքը, .

- Երթևեկելի մաս

- I շերտ Մանրահատիկ ա/բետոն, „Բ"տիպ h=4սմ
- II շերտ Խոշորահատիկ ա/բետոն, „Բ"տիպ h=6սմ
- III շերտ, Խճավազային հիմք (C5), h=20սմ
- IV շերտ Ավազակոպճային շերտ h=10սմ

- Մայթեր
  - I շերտ Բետոնե գունավոր սալարկ (տոմետ) h=6սմ,
  - II շերտ Ցեմենտավազե չոր շերտ h=10սմ,
  - III շերտ Հիմնատակ խիճ h=12սմ
- Իջատեղեր

I շերտ Մանրահատիկ ա/բետոն, „Բ"տիպ h=4սմ

- II շերտ Խոշորահատիկ ա/բետոն, „Բ"տիպ h=6սմ
- III շերտ, Խճավազային հիմք (C5), h=20սմ
- IV շերտ Ավազակոպճային շերտ h=10սմ

<u>Նախահաշիվ</u>

Նախահաշիվը կազմված է աշխատանքային նախագծի ծավալների հիման վրա և համաձայն ՀՀ կառավարության 23 հունիսի 2011 թվականի N 879-Ն որոշման : Հաշվարկման հիմք են հանդիսանում 1984 թ. գները և նորմերը, որոնց վրա կիրառվել են հետևյալ գործակիցները

| | |
|---|---|
| - Հիմնական աշխատավարձ | 2.76350 |
| - Մեքենաների շահագործում | 3.05376 |

Նյութերի գները վերցված են ՀՀ ֆինանսների նախարարության 02.2026թ. ինֆորմացիոն տեղեկագրից, նրանց վրա կիրառելով հետևյալ գործակիցները`

| | |
|---|---|
| - Նյութերի տեղափոխման ծախսեր | 1,132 |
| - Այլ նյութեր | 1,05 |
| - Պահեստավորման ծախսեր | 1,02 |
| Միջին ամսեկան աշխատավարձի չափ է ընդունվել | 299149 դրամ |
| Նախահաշվում հաշվարկված է նաև` | |
| - Վերադիր ծախսեր | 13,3% |
| - Շահույթ | 11% |
| - Ա.Ա.Հ | 20% |

Նախահաշվում հաշվարկված են նաև համապատասխան լիմիտավորված ծախսեր:

Դիտարկելով փորձաքննության ներկայացված նյութերը «Փորձաքննության կենտրոն» ՍՊԸ-ն նշում է , որ՝

1. Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին: Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան:
2. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները այլընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կամզակերպության հետ համատեղ:

Ելնելով վերը նշվածից «ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի փորձաքննությունը ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է, Երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին և ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ Է ՀԱՍՏԱՏՄԱՆ:

Փորձագետ՝ Ա.Հարությունյան